ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«19» 07 2019թ.
N 76-Ա

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«26» հուլիս 2019թ.
N 234-Ա

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

Ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի N706-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Բյուջեների կատարման կարգի» 38-րդ կետի պահանջներով՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2019թ. հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
2) կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
3) ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
4) կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
5) կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը չի կատարում Ծառայությունների դիմաց բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4-րդ ենթակետի:

4. ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
2) կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
3) իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը:

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը նախարարի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
	ընդամենը տարեկան վարձը		325 000
			Երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

4) բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ ԱԱԾ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

5) իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

6) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ բնապահպանության նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 14-ի N75-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ

_____ Ա. Հակոբյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
h/h 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

_____ Է. Գրիգորյան

ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարության 3-րդ շենք
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
h/h 900011018646
հվհհ 02507198

Կ.Տ.

Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն _____ հեռախոս՝ 1-99

ՀՀ ԱԱԾ
Տեղեկատվական անվտանգության և
կառավարական կապի գլխավոր վարչություն
Ելից № 12/2828 24.07.19